


10413



1913

22

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻԿ. ԱՐՈՒՍԵԱԿ ԱԶԻԳԵՑՆԵՐ

891.892-3

L-44

Լեհոն-Լեհոնի

այ

ԳՐԲՈՅՑ Հ. 1.

# „ԻՄ ԷՍՔԻՉՆԵՐԻՑ“

ՄԵՆՍ.ՄԱ.ՐՏ.  
ՏԱ.ՐՕՐԻՆԱԿԸ.



Վաղարշապատ

Ելեքտրաշարժ Տպարան Մ. Աթոռոյ

1913

3002

891.542-3  
L-44

2533

2534

կ Ա

ՔՈՅՑ ՇՈՒՀԱՆԻԿ ՄԻՐԵՄԱՆԵԱՆԻՆ

Վախճանած

Իզիլուս 1904 թ. 28 սեպտ.

Նիկում հիմ գրքոյին

Լ. Լեհնի.

10008  
36015

«Les souvenirs des Morts est leur vie éternelle,  
«Celle que n'éteint pas la chute des années,  
«Car l'âme de leurs fils, en leur âme trempée,  
«Prolonge leur Idée en la Forme nouvelle...»

Touny-Lerys.

2003

## ՄԵՆԱՄԱՐՏ

(Ո.Տ. Յովհաննիսեանին)

Մենք ապրում էինք ժընեվի Plainpa-  
lais (ուսանողական) թաղում և ունէինք  
Madeleine Marchand պանսիօնում կից  
սենեակներ։

Նա՝ իմ հարևանուհին գեղեցիկ էր, ինչ-  
պէս լուսնկա գիշերներին ծփացող հեզանազ  
լճակ, և նրանից բուրող սիրո շոգին ար-  
բեցնող էր, որպէս գարնան նորաբաց վարդ։

Ես յարգում, —իսկ ընկերս սիրում էր  
նրան բուռը սիրով և թւում էր, որ նրանք  
երջանիկ էին։

Մի առաւօտ, նոր էի բարձրացել ան-  
կողնուց, երբ դուռս ամուր բաղխեցին։  
— Մի բոպէով, կամիլ։

Ես շտապեցի. Նա էր՝ իմ հարևանում  
հին՝ գունաթափ և գողդողում էր:

— Ինչ է պատահել, Յօղիկ: հարցրի ես,  
բռնելով նրա ձեռքերը:

— Խուսափեցէք, ի սէր Աստծու,

— Ինչից, Յօղիկ:

— Մերժեցէք, աղաչում եմ՝ մի պա-  
րոն է եկել ինչպէս սեկունդանա և մենա-  
մարտի է կանչում ձեզ:

— Ծիծաղելի է:

— Նա պատճառաբանում է, որ դուք  
վիրաւորել էք իւր ընկերոջը:

— Գժւել են, ինչ է:

— Օ, կամիլ, ես սաստիկ վախենում եմ:

— Հանգստացէք, Յօղիկ, և թողէք ձեր  
յուզմունքը:

Փոքր ինչ յետո, հարևանունու առաջ-  
նորդութեամբ սենեակ մտաւ սեկունդանաբ:

— Ա, դուք էք, պ. Քօցօցեան. համե-  
ցէք, իսպրեմ, ասացի ես ժպտագին:

Քօցօցեանը յեղափոխական էք. ես

նրան ճանաչում էի Կովկասից. բայց այն  
մեծ էքսպրոպրիացիայից յետո գալով Ժը-  
նեվ, մաել էր «յեղափօխական-արիստո-  
կրատների» շարքը, որ այնքան շատ են  
Շվեյցարիայում . . .

— Պարոն, — ասաց նա ինքնակտահու-  
թեամբ, — դուք խորապէս վիրաւորել էք իմ  
ընկերոջ և արատաւորել մեր պատիւը.  
ուստի դուք կամ օրիորդ Յօղիկի ներկա-  
յութեամբ ներողութիւն պէտք է խնդրէք  
նրանից, կամ . . .

— Գուցէ և այլոց ներկայութեամբ . . .  
բայց դուք կատակ չէք անում, պ. Քօցօ-  
ցեան:

— Ինչպէս թէ կատակ. — պատասխա-  
նեց նա աւելի ցցելով դուկուը — ուրեմն դուք  
մոռանում էք ձեր կողիտ վարժունքը:

— Ինչէք էք ասում, պ. Քօցօցեան:

— Այո՛ երէկ զիշեր թատրոնի նըքանց-  
քում դուք ծիծաղել էք, երբ ընկերս անց-  
նելիս է եղել ձեր կողկով, և օրիորդ Յօ-  
ցիկը . . .

— Այ քեզ նորութիւն. — ասացի ես  
ընդմիջելով նրան: — ինչ է ձեր ընկերը ցան-  
կանում է, որ ես ամենախն չծիծաղեմ,  
որովհետև նա կարող է յանկարծ անցնել իմ  
մօտով: — Ասացեք, ինդըեմ: — Երկում է ձեր  
պ. ընկերը վառ երևակայութիւն ունի, այլ  
կերպ ինչպէս բացադրել այդ երկոյթը, երբ  
ես նոյն իսկ չեմ էլ ճանաչում նրան:

— Այո, ես վստահութեամբ կարող եմ  
ասել, որ պ. Կամիլը չի ճանաչում ձեր ըն-  
կերոջ. սակայն աւելի լաւ չեր լինի, որ  
դուք բացադրեէք պ. Լորիսի հետ:

— Ես նրան ոչինչ չունեմ բացադրելու:  
— Ոչ, ոչ. օրիորդը շատ լաւ նկատեց՝  
դուք պարտաւոր էք անպատճառ բացադրե-  
լու նրա հետ:

— «Պարտաւոր էք» . . . Ամենախն ոչ,  
պ. Քօցօցեան. ես ոչնչով պարտական չեմ,  
երբ ձեր ընկերը աւելի քան տարօրինակ է:  
Այդ միջոցին մեզ մօտ եկաւ Քիլասը՝  
ընկերու: Ես նրան իսկոյն պատմեցի եղածը:  
— Լաւ Կամիլ, — դարձաւ նա ինձ — ինչ

կա, գնա բացադրւիր պարոնի հետ և հան-  
գոտացրու նրան:

— Ինչ է, ես հոգեբուժեմ՝ երբէք:

— Զգուշացէք, պարոն, և թոյլ մի տւէք  
աւելի վիրաւորել, այլապէս դուք մենա-  
մարտի կհրաւիրւէք:

— Հա, հա . . . « մենամարտի » . . .  
Խնդրեմ, ես պարտաւոր եմ. և դուք, եթէ  
չեմ սխալւում, հէնց այդ նպատակով էլ  
եկել էք: — իմ կողմից ատրճանակ:

Ամեն ինչ վերջացած էր: Քօցօցեանը  
շտապով սեղմեց Յօղիկի ձեռքը և փնթփն-  
թալով հեռացաւ:

— Թող, խնդրում եմ, յիմարութիւն-  
ներդ — թնդաց Քիլասը — ես կգնամ և կպար-  
զեմ թիւրիմացութիւնը:

Հանգստացնելով Յօղիկին, որ գեռ յուզ-  
ւած էր, սկսեցի եռանդով շահմաթ խաղալ  
նրա հետ, առանց անհանգստանալու, որ իմ  
տիսմար ախոյեանը կարող էր շուտով «ի  
վերին Երուսաղեմ» ուղեսորել:

Ես գիտէի, որ ձեռքս չեր դողա այն

աշխար ուղարկել մի թշւառականի . . .

ինձ ինչ, չէ որ մեռնողը նա էք . . .

— Ահա թէ «որտեղ է թաղւած եղել շան գլուխը», — ասաց Քիլասը հեւալով: — Դու, Յօղիկ, սիրում ես ինձ:

— Միթէ պէտք կա դրանում կասկածել, Քիլաս, պատասխանեց նա անհանգստութեամբ:

— Եյդ մենք կտեսնենք: Օ, կամիլ, ես չարաչար խարւած եմ — ասաց Քիլասը և նրա ձայնը դողաց ջութակի վերջին հընշիւնների նման, և աչքերը վառւեցին արտակարգ կըակով:

«Քօցօցեանի հետ զնացինք իւր ընկերոջ մօտ. վերջինս դիմեց ինձ լացող ձայնով.

— Միթէ օրիորդ Յօղիկը չի յայտնել, որ ես սիրում եմ իրեն, էլ ինչու է ձեր ընկերը ֆոփում նրա շուրջը:

«Ես ցնցւեցի:

— Դուք սիրում էք Յօղիկին:

— Եյո, պարոն, նա ես սիրում է ինձ:

— Ինչպէս Յօղիկը սիրում է ձեզ:

— Նոյն այն ժամից, երբ մենք պատահեցինք համալսարանում: — Այդ սուտ է, նա զբարարում է, մենք լոկ ծանօթներ ենք եղել, ասաց Յօհիկը արտասելով:

— Սպասեցէք օրիորդ, ես այդ կարգ գեմ: Լօրիսը այնուեան պատմեց այն ամենը, ինչ աեղի էք ունեցել իրենց մէջ . . .

— Եխ Սատւած իմ: Նա ստախօս է, նա սրիկա է: հարա տւեց Յօղիկը հեկեկալով:

— Ստախօսը դուք էք դուք. — որոտաց Քիլասը. — Կարգա կամիլ, և նա ձգեց իմ առաջ մի կապոց նամակներ:

— Այ թէ ինչ . . .

— Ես նզովում եմ ձեր սեռը — ընդհատեց Քիլասը սրտմառութեամբ, — որ դիմէ խարել, կեղծել, շողոքորթել և քծնել: Դուք օրիորդ Յօղիկ, ոճրագործ էք՝ դուք սպանեցիք իմ սիրալ, շահագործեցիք իմ զգացմունքները, անարգեցիք իմ անաղարտ սէրը: Օ, դուք . . .

— Հանգստացիր, Քիլաս:

Նա ամբողջ մարմնով ցնցում էր:  
— Եւ ինչու այդ բոլորը, — առաջ տա-  
րաւ նա աւելի բորբոքւելով, — որպէս զի  
ցոյց տաք ձեր սեռակիցներին, որ դուք ու-  
նէք Լօրիսի և ինձ նման տիմար երկրպա-  
գուներ, որպէս զի ձեր անարդ եսը և ար-  
բենաք և հրճէք մեզնից վազող կեանքով...  
«Չո՞հ, զո՞հ»... Ահա կանացդ ցանկութիւնը,  
և որքան շատ լինէն այդ զոհերը, դուք  
այնքան պահանջում էք «էլի, էլի»...  
Դուք, դուք...

Նա էլ չկարողացաւ շարունակել՝ բուռը  
յուզմունքը խեղդում էր նրան:

— Կամիլ, ես գնում եմ. վաղը առա-  
ւոտեան ժամը 4-ին կդաս ինձ մօտ բար-  
ձրանալու Սալեկ<sup>1)</sup>), — ես նշանակել եմ քեզ  
սեկունդանտ . . .

1) Ֆրանսիական սար է ժնեկի արևելեան  
կողմում:

## ՏԱՐՈՐԻՆԱԿԸ

Նա հանգիստ չէր տալիս տեղական  
հայ ուսանողներին. —

Լինելով բարեկազմ և հարուստ, ոչինչ  
չեր ինայում ըստ մօդայի հագնւել ու շփ-  
ւել քաղաքի բարձր դասակարգի հետ:

— Յայտնի չէ թէ ինչու, առհասարակ  
եւրոպայում, կանայք խենթանալու չափ սի-  
րում են թխամորթներին. — գուցէ այն պատ-  
ճառով, որ իրենց մօտ թխամորթներ քիչ  
կան, կամ գուցէ՝ որ վերջինները աւելի  
ուժեղ, աւելի կատաղի են. — մի յատկու-  
թիւն, որ այնքան գրաւում է կանաց՝ մա-  
նաւանդ արևմտեան երկրներում . . .

— Սակայն աւելի լաւ է թողնել, որ  
այդ երեսյթի բացադրութիւնը կանայք  
իրենք տան . . .

Եւ նա, չնորհիւ իւր առոյգ, բարձր հա-

սակի և թիութեան, սաստիկ սիրւած էր  
ու նկատւած կանացից։ Շատ քիչ կպա-  
տահեր, որ նա յետ մնար օպէրայից, կամ  
պարահանդէսից, ուր միշտ նրան շրջապա-  
տում էին կանայք, հիանում ինսամւած, սև  
մագերով, գովում նրա սև, թաւ յօնքերը, յա-  
փշտակւում, կրակոտ, սև աչքերով, որ զի-  
տէին նւաճել կանացի թօյլ, մեղկ սրտերը,  
և հլու կամակատար գարձնել նրանց . . .

Արևի կարմիր գուճնդը կիսովին ծած-  
կւել էր ժուրայի թիկունքին. նրա վերջին  
ճառագայթները արդէն շտապում էին թող-  
նել ժ. Ժ. Ռուսօի կզզին շրջապատող ան-  
համագիստ ջրերը, նրանց վրա թառած սև-  
սպիտակ կարապները, երբ ես ու նա մանե-  
լով կզզին՝ նստեցինք դէպի Մօնրլան կա-  
մուրջը նայող ափի նստարաններից մէկի  
վրա։

— Եթէ մարդիկ, ինչպէս հին յոյները,  
միջոց չտային առլելու արտաւորներին,

մենք կունենայինք գեղեցիկ՝ ֆիզիքապէս  
և մտաւորապէս առողջ ցեղ. դառնալով ինձ,  
նա վերսկսեց մեր ընդհատւած խօսակցու-  
թիւնը։

— Իսկ մարդասիրութիւնը :

— «Մարդասիրութիւն» . . . պարապ  
խօսք։ Ասա խնդրեմ, ով մեղնից «մարդա-  
սէր» լինելով հանդերձ, չէ սիրում գեղե-  
ցիկը և չի գերազանում այն . . .

— Իսկ ինչով են մեղաւոր արատաւոր-  
ները, որ աշխար են եկել։

— Պարզ է ոչնչով. այնուամենայնիւ,  
յանուն գեղեցիկի, մենք պէտք էնդիմա-  
գրենք նրանց աճման։

— Ասա, տեսնեմ, ինչպէս կվարւէիր  
գու, եթէ ամուսնանալով մի գեղեցիկ կնոջ  
հետ, և մի քանի ժամանակից յետո նա  
կորցնէր իւր գեղեցկութիւնը. — չէ որ այդ  
յաճախ է պատահում, մանաւանդ ծննդա-  
բերութիւնից յետո։

— Շատ հասկանալի կերպով. — Ես կդա-  
դարէի սիրել կնոջու և կհեռանայի նրանից։

— իսկ զաւակներդ: «Զաւակներ» . . . Նըմանք շատ չնչին են երբ անհատական ես կա . . .

«Լսիր ինձ. — շարունակեց նա — ինչպէս այստեղ, կովկասումն էլ, ես սիրում էի լայն ծանօթութիւն պահպանել գեղեցիկ սեռի հետ, ուր միշտ ունենում էի իմ տրամադրութեան ներքո մի քանիսը. — մի կինը շատ քիչ, շատ չնչին է բաւականութիւն տալու իմ հոգեկան բոլոր պահանջներին:

«Գիմնազիօնի վերջին դասարանում էի, երբ անսպասելի կերպով ծանօթացա մի օրիորդի հետ: Մարուսիան — այդպէս էր նրա անունը — հարուստ տաճ աղջիկ էր. միջնակարգ կրթութիւնը վերջացնելուց յետո, զիշելով մօր թախանձանքներին, մնացել էր տաճը, որ իւր մայրը՝ ինչպէս սիրում էր ասել՝ «մի աստղով և նամուսով փեսացու գտնէր, իւր մինուճար Մարուսի համար» և բախտաւորացնէր իրեն:

«Մի երեկո, երբ ես կրթնած լուսա-

մուտիս նայում էի փողոցի ժիղովը, սենեակու մտաւ ծառան և յայտնեց, որ հարկանի սպասաւորը ցանկանում է տեսնել ինձ:

— Թող ներս գա, ասացի:

«Նա եկաւ և գլուխ խոնարհելով կանգնեց իմ առաջ:

— Ինչ էք ցանկանում:

— Պարոն, տիկինս խնդրում է ձեզ:

— Ինձ բացականչեցի ես:

— Այս, պարոն:

«Ես իսկոյն յարդարւեցի և վերցնելով զլարկու հետեւեցի սպասաւորին:

«Տիկինը սպասում էր ինձ աստիճանների վրա, երբ ես բարձրացա վերև:

— Համեցէք, համեցէք, ասաց նա, ուրախութեալու թօթափելով ձեռքս:

«Մենք մտանք մի սալօն. ուր թաւշէպատ աթոռները, ճօճաթոռը, գեղեցիկ լուսամփոփ լամպերով անկիւնների կղոր սեղանները, պատերի պէիզաժներն ու կանացի մերկ կիսանկարները, սրանց ներքմում

10008  
360/1

պատւանդաների վրայի արձանիկները, դուների, լուսամուտների գեղագործ վարագոյրներն և Թուբինշտէյնի մեծադիր պատկերով պիանօն և յատակին փուած նուրբ գորգը տալիս էին սալօնին մի ֆանտասիք, դիւրեկտուածուք:

— Վեր համեցէք, ինդրեմ. դիմեց տիկինը, երբ ես պատրաստւում էի նայել լուսամուտի առաջ:

— Ասացէք, ինդրեմ, ինչով կարող եմ ծառայել ձեզ:

«Ես ձգելով ինձ վրտ մի գորովադութ հայացք, մեղմօրէն ժպտաց.

— Որդիս, ես դիմեմ, որ գուք օտարական էք մեր քաղաքում. ոչ երանի ձեր մօրը, նա ինչպէս է կարողանում ձեզնից հեռու ապրել:

— Մայրիկ, վաղուց է, ինչ ես զրկւած եմ մօրից:

— Ամբախտ ծնող. իսկ հայր ունէք:

— Նա մօրից յետո շատ քիչ է ապրել:

— Վայ ինձ. իսկ քոյր կամ եղբայր խօմ ունէք:

— Ամենախն՝ ինձ ծնելուց յետո մայրս մեռել է. իսկ հայրս, ինչպէս ասացի, մօրս մահւանից յետո շատ կարճ կեանք է ունեցել. — հօրաքսյրա է եղել ինձ պահողն ու մեծացնողը:

— Քոռանամ ես, խեղճ տղա, ասաց նայուզմունքով:

— Ճակատագիր է, մայրիկ, ինչ պէտք է անել, յարեցի ես ակամայից հասաչելով:

— Որքան կուրախանա Մարուս, երբ իմանա ձեր այստեղ լինելլ. — նա շատ է հաւանում ձեզ:

— Միթէ ձեր աղջիկը ճանաչում է ինձ:

— Ինչպէս չէ. նա միքանի անդամ պատահել է ձեզ գրսում, բացի այդ Մարուս շատ յաճախ տեսնում է ձեզ լուսամուտից:

— Սակայն այդ ինչպէս է . . .

«Զանգահարեցին»:

— Մարուս է, փողոց էր գնացել զգեսա-

ներ գնելու, ասաց նա և ներողութիւն խնդրւելով հեռացաւ:

«Մէնակ մնալով ես սկսեցի թերթել սեղանի վրայի ալբումները, երբ յանկարծ սալօնի դռները բացւեցին և Մարուսիան, որպէս մի Կուպիդոն (սիրո աստւածունի), սուրաց դէպի ինձ:

— Որքան գո՞ն, որքան ուրախ եմ, պարոն, տեսնելով ձեզ մեր յարկի տակ! — ասաց նա նազանքով և մի ժամանակ ինչպէս հեղիկ գեփիւռ, յուզեց նրա աստւածային դէմքը, թողնելով հեշտալից այտերին սիրանւէր փոսիկներ:

«Ես յարգանքով համբուրեցի նրա քնքուշ ձեռքը:

— Երկի ձեզ ձանձրալի էր մօրս ընկերութիւնը:

— Ամենաին, օրիորդ Մարուսիա, ես սիրով լսում էի նրան:

— Զեր այցելութիւնը շատ հաճելի է, պարոն, ես և մայրս շարունակ ցանկացել ենք ձեր բարեկամութիւնը:

— Շատ սիրելի էք, օրիորդ, ասացի ես ընկերով . . .

«Մենք նստեցինք բազմոցի վրա մօտ ի մօտ:

— Յուսամ, որ շուտ-շուտ կայցելէք մեզ:

— Ցաւում եմ, օրիորդ Մարուսիա, որ անկարող եմ կատարել ձեր հաճելի ցանկութիւնը՝ այս վերջին ամիսները պէտք է նովրեմ քննութիւններիս:

— Միթէ ամբողջ օրը աշխատելու էք:

— Հաւանականօրէն՝ անցած ամիսներում բան չեմ արել:

— Ե, դուք ծոյլ, — ախ, ներեցէք, պարոն, զիտէք ես սաստիկ սիրում եմ իմ բարեկամների հետ պարզ ու անկեղծ լինել:

— Կպարտաւորացնէք, օրիորդ:

— Այդ ինչպէս է, որ անցեալներում քիչէք աշխատել:

— Խենթութիւններ . . .

— Ահ . . . Ես նկատել եմ, որ դուք ծանօթների լայն շրջան ունէք:

— Այս, բաւականին:

— Այսուամենայնիւ ես կսիրեմ յուսալ,  
որ դուք չեք մոռանա մեզ. ասաց նա  
ընկղմւելով բազմոցի մէջ:

«Ճիշտ է թէկ աւարտման քննութիւն-  
ները մօտենում էին, սակայն Մարուսիայի  
նման մի աստւածային կերաւած հեշտու-  
թեամբ մոռացւել կտար ինձ ամեն ինչ:

— Կաշխատեմ, օրիորդ Մարուսիա, հա-  
ճոյանալ ձեզ և վայելել ձեր բազցը բարե-  
կամութիւնը:

— Զաւակներս, գնանք սեղանատուն,  
թէյը պատրաստ է. մանելով սալօն յայտնեց  
տիկինը երջանկօրէն նայելով մեզ:

— Ինչով կցանկաք հիւրասիրեմ ձեզ.  
Դիմեցինձ Մարուսիան անուշ ժաղիտը երեսին:

— Օրիորդ . . .

— Մի ամաչէք, զաւակս ձեր տունն է:  
Այսուհետեւ մեր դռները բաց են ձեր առաջ,  
եկէք մեզ մօտ, երբ սիրտներդ ուղէ:

— Շատ ուրախ եմ, մայրիկ. անչափ  
բարի էք:

«Մայր ու աղջիկ շատ զոհ էին իմ ներ-  
կայութիւնից և աշխատում էին ամեն կերպ  
պատել ինձ:

«Թէյից յետո մենք դարձանք սալօն:  
Մարուսիան իմ խնդրանքով նստեց պիանօի  
առաջ և նրա դալար մատերը սկսեցին սա-  
հել, թոշկուալ լատերի վրա: Նա մեծ ոգե-  
ւորութեամբ ու զգացւած նւագեց թէթհա-  
վէնի այն սօնաաը, որ ինքնուրացութիւն է  
քարսպում . . .

«Այդ օր, մինչև ուշ երեկո, ես մնացի  
Մարուսիայի հետ սալօնում և վաս յուսերով  
վերադարձա սենեակս . . .

«Կարճ ժամանակւա ընթացքում մենք  
այնքան մտերմացանք, որ Մարուսիայի  
մայրը ամենայն վստահութեամբ թողնում  
էր մեզ առանձնանալ: — Պէտք է, ասել, որ  
մայրը շատ զոհ էր գրանից՝ իւր երազած  
«ասազով և նամուսով փեսացուն» նա գտած  
էր համարում:

«Մենք շուտով ամուսնացանք»:  
 «Առաջին ամիսը անցաւ այնպէս, ինչ-  
 պէս բոլոր ամուսնութիւններից յետո . . .  
 Բայց երկրորդ ամսից Մարուսիան սկսեց  
 անտանելի դառնալ: Ի թիւս շատ յիմարու-  
 թիւնների նա հարկադրեց մեղ բուսակեր  
 դառնալ: — «Ճի, ես չեմ կարողանում տա-  
 նել միսը — յաճախ կրկնում էր նա թթւե-  
 ցնել գէմքը — ճարպահուար սպանում է ինձ»:  
 Ես իհարկէ ոչինչ չէի հասկանում, միայն  
 նրա մօր գէմքին իւրաքանչիւր անզամ երբ  
 Մարուսիան գանգատուում էր սրտախառնու-  
 թիւնից, փայլում էր մի երջանիկ ժպիտ:

— Մայրիկ — ասացի ես մի օր — Մա-  
 րուսիան հիւանդ է երևում, պէտք է բժիշկ  
 կանչել:

«Նա գոհունակութեամբ ծիծաղեց գր-  
 կելով ինձ:

— Զէ, զաւակս, նա ոչինչ չունի, մի-  
 այն յղի է:

«Յղի» բառը սարսափեցրեց ինձ. —  
 «Դա այն գրութիւնն է, որից ծնւում

է երեխան՝ այն ձիմուն, այն փոքրիկ ոչն-  
 չութիւնը, որ ընդունակ է չէղոքացնել  
 կնոջ և սէրը, և ուշագրութիւնը, և հոգա-  
 սարութիւնը: Նա է՝ երեխան, որ խլելով  
 ամուսինների քունն ու հանգիստը, դարձնում  
 է նրանց անմռունչ կամակատարներ:

— Այո, ես սարսափեցի . . .  
 «Մարուսիան օր աւուր այլանդակւում  
 էր. նրա աչքերը սկսել էին ուռչել, խամ-  
 րել և կորցնել նախկին հրապոյը. երեսը  
 ծածկւում էր ցանիկներով (պէպէն), խկ  
 փորի տեսքը . . . Օ, Աստած իմ, ես . . .  
 Նա շարունակ գանգատուում էր, տրտնջում,  
 հոգի հանում . . . Ես ամեն կերպ աշխատում  
 էի խուսափել, փախչել նրանից և այլս  
 չտեսնել նրան:

«Գոհութիւն Աստծու, քննութիւններս  
 մօտեցան և ազատեցին ինձ Մարուսիային  
 յաճախ տեսնելուց: Ամբողջ օրը ես փակ-  
 ւելով սենեակում անվերջ աշխատում էի.  
 իսկ նա ու մայրը եռանդով շորեր էին կա-

ըում և պատրաստութիւն տեսնում իմ գա-  
լիք ժառանգի համար:

— Ծիծաղելի էր . . .

«Մի անգամ ճաշից յետո, նոր էի սկսել  
աշխատանքս, երբ Մարուսիան մտաւ սե-  
նեակս ձեռքին ինչ որ բան:

— Նայիր—զիմեց նա հրճւանքով — տես  
որքան սիրուն է, ես եմ կարել փոքրիկի  
համար:

— Այս, շատ լաւն է. շաապեցի պա-  
տասխանել ես, յուսալով, որ նա կբաւա-  
կանանա այդքանով:

— Գիտես, մաման ասում է, որ ես  
տղա կունենամ. օ, աղաները շատ չար են  
լինում, ես չեմ սիրում նրանց:

«Իձն, ինարկէ, չէր հետաքրքրում, ոչ  
նրա տղան, ոչ էլ աղջիկը, այլ՝ որ նա շու-  
առվ հեռանար:

— Մարուս, այ Մարուս,—լսեց մօր  
ձայնը—եկ, ծառան վերադարձաւ:

«Ես ազատ շունչ քաշեչի . . .

«Մարուսիան շուառվ ունենալու էր մեր  
«սիրո պտուղը», որը իւր անտանելի «ուա»-  
ներով լցնելու էր մօր սիրալ բերկու-  
թեամբ, երջանկութիւնով, իսկ իմը՝ տհա-  
ճութեամբ, զայրոյթով:

«Ես արդէն ուղարկել էի վկայական-  
ներս համալսարան և անհամբեր սպասում  
էի պատասխանի, որը ազատելու էր ինձ  
թէ մեր «սիրո պտուղի» «ուա»ներից, և թէ  
իւր մօրից:

«Վերջապէս ես ստացա համալսարա-  
նից իմ ընդունելութեան թերթը:

«Մայր ու աղջիկ շատ տիրեցին, երբ  
իմացան իմ որոշումը՝ նախ քան փոքրիկի  
աշխարհ գալը թողնել նրանց:

«Ես ի հարկէ անդրդւելի մնացի. և մի  
գիշեր հրաժեշտ տալով նրանց, ճանապարհ-  
ւեցի արտասահման . . .



25

10413



NL0835149

